

ԻՆՔՍԻՇՆԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐՊԱՆՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ՖՐԱՆՏԻԱՅԻ ՕՐԻՆԱԿՈՎ)
Լուսնել ԽՈԶԱՅԱՆ

Բանալի բառեր. Եվրոպական ինտեգրում, Եվրոպական Միություն, Ֆրանսիա, պետական ինքնիշխանություն, ազգային շահ, ամուր միջուկ, վերազգային ինստիտուտներ, միջկառավարական մոտեցում, վերպնդուկտ սկզբունք, արդյունավետ ինքնիշխանություն:

Ключевые слова: Европейская интеграция, Европейский Союз, Франция, государственный суверенитет, национальный интерес, крепкое ядро, наднациональные институты, межправительственный подход, наднациональный принцип, резульвативный суверенитет.

Keywords: European Integration, European Union, France, state sovereignty, national interest, "hard core", supranational institutions, intergovernmental approach, supranational principle, "productive" sovereignty.

Լ. Խօջայն

**Տենденции сохранения и трансформация государственного суверенитета
в Европейском Союзе (на примере Франции)**

В данной статье проблема государственного суверенитета рассматривается на примере европейской интеграции Франции. Хотя Франция является первоходцем в процессе европейской интеграции и представлена на всех уровнях (интеграции), тем не менее, ее европейская политика не лишена противоречивости. В статье подробно представлено, что на разных этапах политики европейской интеграции Франции доминировал межгосударственный подход, и придавалось большое значение проблеме защиты национальных интересов.

L.Khojayan

**Tendencies of Preservation and Transformation of State Sovereignty
in the European Union (the Example of France).**

The article considers the problem of state sovereignty on the example of European integration of France. Although France is a pioneer in the European integration process and it is represented at all levels of integration, its European policy is not without contradictions. It is argued in the article that had to keep a fragile balance between further integration and national sovereignty. At different stages of European integration in the policy of France dominated the intergovernmental approach, and the protection of national interests had a great importance.

Սույն հոդվածում պետական ինքնիշխանության խնդիրը քննարկվում է Ֆրանսիայի Եվրոպական ինտեգրման օրինակով: Լինելով Եվրոպական ինտեգրման գործընթացի առաջամարտիկ պետություն և ներկայացված լինելով ինտեգրման բոլոր հարթություններում՝ Ֆրանսիայի Եվրոպական քաղաքականությունն, այնուամենայնիվ, չենք կարող բնորոշել որպես հակասություններից զերծ գործընթաց: Հոդվածում մանրամասն ներկայացվել է, որ Ֆրանսիայի Եվրոպական ինտեգրման քաղաքականության տարբեր փուլերում զերիշխել է միջպետական տրամաբանությունը և կարևորվել է ազգային շահերի պաշտպանության խնդիրը:

Այսօր հնարավոր չէ ունենալ այլ Եվրոպա. միակ տարրերակը պետությունների Եվրոպան է:¹
Ծ. դր Գոյ

Արդի աշխարհին բնորոշ գլոբալացման և ինտեգրման համատեքստում, եթե մեծանում է առանձին պետությունների փոխկապակցվածությունը, և եթե պետությանը (որպես միջազգային իրավունքի հիմնական սուբյեկտ) զուգահեռ միջազգային հարաբերությունների համակարգում սկսում են առանցքային դերակատարում ունենալ նաև միջազգային կազմակերպությունները, քաղաքագիտության մեջ նկատվում է պետական ինքնիշխանության խնդիրի նկատմամբ հնտարքրության աճ: Հատկապես առանցքային են դառնում պետական ինքնիշխանության ավանդական գաղափարներին ուղղված մարտահրավերները, որոնք պահանջում են ինքնիշխանության խնդիրին նորովի անդրադարձ: Արևմտյան Եվրոպայում ինտեգրման մակրագույնումը և զարգացումը, Եվրոպական Միության տրվող իրա-

¹ St'u La politique européenne du général de Gaulle, http://www.gaullisme.fr/politique_europ_cdg.htm, (07.07.2014):

Վասուլյունների շրջանակի աստիճանաբար ընդլայնումը և նաև ԵՄ-ում վերազգային չափման մեծացումը ևս այդ մարտահրավերների շարքին են դասվում: Հենց նվրոպական ինտեգրման երևոյթը հանդիսանում է այն ամենի բացատրությունը, որ ինքնիշխանության մասին տեսական քննարկումներն սկսում են գրավել գիտական հանրության ուշադրությունը: Սույն հոդվածի մեջ պետական ինքնիշխանության հիմնախնդիրը մենք կդիտարկենք Ֆրանսիայի նվրոպական ինտեգրման օրինակով: Մեր նպատակն է Ֆրանսիայի, որպես ԵՄ-ում, ամուր միջուկն հանդիսացող պետության օրինակով, վերհանել և զնահատել պետական ինքնիշխանության վրա նվրոպական ինտեգրման ազդեցությունը: Այս հիմքով, առանձնացրել ենք երկու խնդիր:

1. քննարկել Ֆրանսիայի նվրոպական ինտեգրման առանձնահատկությունները,
2. զնահատել պետական ինքնիշխանության խնդրի վերահիմնաստավորումը Ֆրանսիայի նվրոպական ինտեգրման համատեքստում:

Չնայած այն հանգամանքին, որ ֆրանսիական գիտական և քաղաքական շրջանակներում նշվում է, որ նվրոպական ինտեգրման գործնթացում Ֆրանսիան հանդիսանում է առաջամարտիկ և «ամուր միջուկ», միաժամանակ, կարելի է նկատել, որ տարբեր քննարկումներում և ուսումնասիրություններում անընդհատ առաջ է քաշվում և քննարկվում նվրոպական ինտեգրման գործնթացում երկրի ինքնիշխանության խնդիրը: Մասնավորապես, փորձ է արվում հասկանալ, թե ինչ համապատասխան եզրերով կարելի է բնութագրել նվրոպական ինտեգրման գործնթացում Ֆրանսիայի ինքնիշխան որոշ իրավասությունների՝ վերազգային ինստիտուտներին փոխանցնելու հանգամանքը, և նաև փորձ է արվում հստակեցնել, թե Ֆրանսիայի նվրոպական քաղաքականության համատեքստում գերիշխող է միջկառավարակա՞ն, թե՞ վերպետական տրամաբանությունը:

Ֆրանսիան էական դեր է խաղացնել նվրոպական ինտեգրման մեջողի մշակման և դրա կյանքի կոչման գործում: «Ամուր միջուկի» ֆրանսիական ընկալման համաձայն¹, միասնական նվրոպայի կառուցվածքում առանցքային պետք է լինի միատարր միջուկը՝ կազմված Ֆրանսիայից և Գերմանիայից, որը բոլոր ոլորտներում կգործի միանական կանոններով՝ միաժամանակ առաջ կրաշի նոր նախաձեռնություններ: Տարբեր ժամանակներում Ֆրանսիայի քաղաքական գործիչները, կանգնած լինելով նվրոպական ինտեգրման գործնթացի զարգացման հիմքում, միաժամանակ հետապնդում էին իրենց ազգային շահերը: Մասնավորապես, նվրոպական ինտեգրման նախագիծն ի վերաբերյալ բավականին արդյունավետ միջոց էր վերականգնելու Ֆրանսիայի քաղաքական ազդեցությունը: Ինչոր չափով իրաժարվելով իր ինքնիշխան իրավասություններից՝ Ֆրանսիան հնարավորություն ունեցավ ազդեցնություն ինտեգրման ողջ գործնթացի վրա: Նրա ազդեցությունը նվրոպական ինտեգրման գործնթացի նկատմամբ մեծ է եղել հատկապես այն ժամանակ, եթե ենց ինքն է կանգնած եղել տարբեր նախաձեռնությունների առաջրաշման և իրականացման հիմքում: 1951թ. Ածխի և պողպատի նվրոպական ընկերակցության հաջողությունը նաև Ֆրանսիայի արտաքին քաղաքականության հաջողություններից էր: Ֆրանսիան հետազայում մեծ դեր խաղաց նաև ինտեգրման հաջորդ նախագծերում, մասնավորապես, 1960-ական թթ. ընդհանուր զյուղատնտեսական քաղաքականության, հետազայում նաև ներքին շուկայի, Տնտեսական և արժութային միության, արտաքին և անվտանգության քաղաքականության բնագավառներում:

Բազմաթիվ առումներով կանգնած լինելով ինտեգրման գործնթացի տարբեր նախագծերի հիմքում՝ Ֆրանսիան միաժամանակ եղել է նաև ի հայտ եկող դժվարությունների պատճառ:

Սրա հետ կապված որոշ փորձագետներ² Ֆրանսիայի նվրոպական քաղաքականությունը զնահատում են «այյո»-ի և «ոչ»-ի միջև երկընտրանքների հաջորդականությամբ: Մասնավորապես, վերջինի հետ կապված ասպարեզ են բնրվում այնպիսի օրինակներ, ինչպիսիք են՝ 1954թ. Ֆրանսիայի Ազգային ժողովում նվրոպական պաշտպանական ընկերակցության նախագծի տապալումը, Մեծ Բրիտա-

¹ Այս զաղափարն առաջ է քաշվել գերմանական քաղաքական շրջանակներում 1994թ.: Սակայն, միաժամանակ, Ֆրանսիայի վարչապետ Է. Բալագորին առաջ էր քաշել «համակենտրոնացված խմբավորի» զաղափարը, որը համապատասխանում է «ամուր միջուկի» հայեցակարգին: Այս մասին առավել մանրամասն տե՛ս Crivat L., *Mythes et realites de l'integration différenciée dans l'Union européenne, Institut European, Universite de Geneve, EUROPA etudes 6-1997, էջ 15-17:*

² Stéphane Lefebvre, Maxime. «La France à la veille de la présidence européenne». Europe visions. No 1 (2008), էջ 1-14:

Նիսյի անդամակցության դեմ Գոլի Կողմից վետոյի կիրառումը¹, 1965թ. «դատարկ ալթոփ» քաղաքականությունը², և ի վերջո 2005թ. Սահմանադրության նախագծի տապալումը: Իրոք, վերոնշյալ իրադարձություններն ինտեղման գործնաթագի շարժմացում կարելի է դիտել որպես հետընթաց, սակայն, Ֆրանսիան հետազայում, մեծ հաշվով, որոշ հարցերի նկատմամբ կա՞մ փոխել է իր դիրքորոշումը (օրինակ, Մեծ Բրիտանիայի անդամակցությունը, նաև կարող ենք վկայակոչել վերջինիս առաջամարտիկ լինելն արտաքին և անվտանգության քաղաքականության առաջքաշման գործում), կա՞մ էլ փորձել է նախաձեռնել որևէ նախագծի տապալմանը փոխարինող այլ նախագիծ, որը կարող է առաջընթաց ապահովել (օրինակ, կարելի է վկայակոչել Ն. Սարկոզիի մեծ չափով շահագրգուած լինելը Լիսաբոնի պայմանագրի նախագծով³):

Այսինքն, պատմական տարբեր ժամանակներում Ֆրանսիան, առաջ քաշելով տարբեր նախագծեր, միաժամանակ որոշ դեպքերում հստակորեն կարևորվել է իր ինքնիշխան իրավասությունների և ազգային շահերի պահպանման լանդիրը: Բայց, այնուամենայնիվ, ինտենգրման գործընթացին նայելով ներկայիս հարթությունից՝ կարող ենք ասել, որ Ֆրանսիան ներկա է ԵՄ-ի ինտենգրման հարթությունում ներկայումս գործող բոլոր կարևոր բնագավառներում, շատ ոլորտներում իր տարբեր իրավասություններ փոխանցել է վերազգային ինստիտուտներին և նաև եղել է ինտենգրման առաջմեջիշ կենտրոններից մեկը:

Ֆրանսիան Եվրոպական ինտեգրման գործընթացի հիմքում տեսել է իր ազդեցության մեծացման խնդիրը, և Ֆրանսիայի տարբեր ժամանակների առաջնորդները միավորված Եվրոպայի միջոցով փորձում էին իրականացնել իրենց ազգային տարբեր շահերը: Եվրոպայի միավորման դր Գոլի հայցակարգը, հեղինակների գնահատմամբ, հիմնված էր ոչ թե վերազգային համագործակցության վրա, այլ ավելի շատ կարևորում էր ազգերի Եվրոպայի տեսլականը, որը յուրաքանչյուր անդամ-պետությանը կտա մեծ անկախություն և միաժամանակ թույլ կտա պաշտպանել նրանց ինքնիշխան իրավասությունները:⁴ Գոլի խոսում էր համադաշնային Եվրոպայի մասին, որտեղ կհարգվեն յուրաքանչյուր անդամի իրավունքները: Նա Եվրոպական քաղաքականությունը չէր դիտում որպես վերջնանպատակ, այլ դա դիտում էր Ֆրանսիայի համաշխարհային քաղաքականության մի մասիկ:⁵ Այսինքն, ըստ Գոլի ընկալման, միասնական Եվրոպայի կառուցումը հիմնված կլինի միջկառավարական մոտեցման վրա, և յուրաքանչյուր անդամ կպահպանի իր ինքնիշխան իրավասությունները: Պետք է նշել, որ հենց դր Գոլի ժամանակների Եվրոպական քաղաքականությունը դիտարկելով՝ ազատական-միջկառավարական մոտեցման հայտնի ներկայացուցիչ Է. Մորավչիկը ցույց է տալիս պետության առանցքային դերն ինտեգրման գործընթացում:⁶ Սակայն, դր Գոլի գաղափարները հետազոտում ամբողջովին չկիրառվեցին Եվրոպական ինտեգրման գործընթացում, մասնավորապես, վերազգային ինստիտուտների դերի մեծացումը և որակյալ մեծամասնության սկզբունքի կիրառում դրա ապացույցներն են: Սրա հետ կապված որոշ հետազոտողներ նշում են, որ ռեալիստական կամ նոր ռեալիստական սկզբունքներն այլևս չեն կարող ամբողջական և բավարար հիմք հանդիսանալ այն խնդիրների համար, որոնք վերաբերում են Ֆրանսիայի Եվրոպական ինտեգրմանը: Մասնավորապես, ի նկատի են առնվում որոշ գործոններ, որոնք կան այսօրվա Եվրոպայում՝ տնտեսական ինտեգրման առաջնությունը, Եվրո-

¹ Այս իհմքով հայտնի տեսաբան Հովհանն ասում էր, որ Գոլի հակադրվելը հանդիսանում է ազգային պետության ակտիվության արդյունք: Նա նշում էր, որ Եվրոպական ազգային ինքնիշխան պետությունը դեռևս չի «հնացել»: Stéphane Schwob, *Theories de l'intégration européenne, approches, concepts et débats*, Edition Montchrestien, 2005, Paris, էջ 83:

² Ի նկատի է առնվտմ 1965թ. պայքարը ԵՏՀ ղակավար մարմինների իրավասությունների ընդլայնման շուրջ: Ֆեղիբալիստները ԵՏՀ-ի հանձնաժողովի աջակցությամբ պահանջում էին ուժեղացնել ԵՏՀ-ի ինստիտուտների վերազգային իրավասությունները, որոշումների ընդունման գործընթացում իրաժարվել կոնսենսուսի սկզբունքից՝ հօգուտ ծայների մնամասնության: Ի պատճին սրան՝ դր Գոլը համանակալրապես դադարեցնում է Ֆրանսիաի մասնակցությունը ԵՏՀ Նախարարների խորհրդի նիստերին: Առավել հանգամանորեն տե՛ս Բօրկո Յ., Բուտորինա Օ., *История развития Европейского Союза*, // Европейская интеграция: учебник, М., 2011, էջ 6-7:

³ Site Nicolas Sarkozy: un traité simplifié proposé au Parlement, Strasbourg, 21.02.2007, <http://www.taurillon.org/Nicolas-Sarkozy-un-traité-simplifié-proposé-au-Parlement>, (01.03.2013):

⁴ *S'il Szęptycki A., La conception gaullienne de l'ordre européen, AFRI, volume III, 2002, t. 392-403, <http://www.afri-ct.org/IMG/pdf/szepetcki2002.pdf>, (26.02.2013):*

⁵ Stéphane Hirsch, *La politique européenne du général de Gaulle*, http://www.gaullisme.fr/politique_europ_cdg.htm, (07.07.2014)

⁶ Stéphane Moravcsik, A., *Le grain et la grandeur: les origines économiques de la politique européenne du général de Gaulle*. Revue française de science politique. N 4-5 (1999), t.2 507-544, http://www.persee.fr/web/revues/home/prescript/article/rfsp_0035-2950_2000_num_50_1_395454, (15.11.2013):

պայի ազդեցության նվազումն աշխարհում և այլն:¹ Այսինքն, այս գնահատականով փորձ է արվում հստակեցնել, որ ճիշտ է, Ֆրանսիան ինտեգրման գործընթացում միանչանակ չի կարող առաջ շարժվել միջկառավարական մոտեցմամբ՝ անտեսելով վերազգային չափման դերը հատկապես տնտեսական քաղաքականության մեջ, սակայն, միաժամանակ, կարևորվում է Ֆրանսիայի շահերի խնդիրը:

Որոշ հետազոտողներ² 1980-ական թթ. վերջի և 90-ական թթ. սկզբի ինտեգրման գործընթացներում առկա զարգացումները և դրանցում Ֆրանսիայի առաջամարտիկ լինելը փորձում են բացատրել նրանով, որ Ֆրանսիան դրանով փորձում էր զավել Գերմանիայի հետագա հզորացումը:

Մասսատրիխստի պայմանագրում առկա երեք «հենքերի» գաղափարը ևս առաջ է քաշվել Ֆրանսիայի կողմից: Դա թույլ է տվել վերազգային և միջկառավարական մոտեցումների դրույթները կիրառել տարրեր հենքերում՝ միաժամանակ առավել կարևոր ոլորտներում համագործակցությունը սահմանափակել միջպետական շրջանակներում: Ըստ որոշ գնահատականների՝ Ֆ. Միտերանն այդ ժամանակ պատրաստակամություն հայտնեց պետական ինքնիշխանության որոշ տարրեր կիսել մյուս անդամ-պետությունների հետ՝ հօգուտ Ընկերակցության, քանի որ կարծում էր, որ այն, ինչը Ֆրանսիան կորցնի իր ինքնիշխանությունից, կշահի ազդեցությամբ³: Սակայն Մասսատրիխստի պայմանագիրը Ֆրանսիայի համար թանկ վճարված հաջողություն էր, քանի որ այդտեղ նախատեսվում էր հաստատել Տնտեսական և արժութային միություն՝ ներառյալ անցում միամսական արժույթին: Ֆրանսիան արժութային քաղաքականության ոլորտում կորցրեց իր ինքնիշխանությունը և պարտավորվեց ենթարկվել վերազգային բնույթ ունեցող Եվրոպական կենտրոնական քանկին: Ըստ հեղինակների, «մասսատրիխստյան Եվրոպան» չի համապատասխանում Գոլի պատկերացրած ազգերի Եվրոպային: Պետական ինքնիշխանությունն այդտեղ որոշ չափով սահմանափակվեց և վերազգային համագործակցությունը դարձավ Գերմանիային զավելու հիմնական միջոց⁴:

Եվրոպական ինտեգրման մեջ առկա ճգնաժամը, որը պայմանավորված էր Սահմանադրության նախագծի տապալմամբ, որոշ խնդիրներ ի հայտ բնրեց Ֆրանսիայի Եվրոպական քաղաքականության մեջ: Եվ այս առումով այդ ժամանակվա Ֆրանսիայի նախագահ Սարկոնին ի սկզբանն կարևորեց վերադարձը Եվրոպա՝ նշելով, որ չկա ուժեղ Ֆրանսիա՝ առանց Եվրոպայի, և ուժեղ Եվրոպա՝ առանց Ֆրանսիայի⁵: Նա ջանքն գործադրեց, որ Լիսաբոնի պայմանագրի միջոցով Ֆրանսիան «վերադարձն» Եվրոպա: Միաժամանակ նա պաշտպանեց տապալված Սահմանադրության նախագծում առկա որոշ կարևոր տարրեր, ինչպիսիք են՝ ընդլայնել որակյալ մեծամասնության սկզբունքի կիրառման շրջանակն այնպիսի կարևոր հարցում, ինչպիսին միզրացիոն քաղաքականությունն է:⁶

Ֆրանսիան, ցանկանալով հզոր Եվրոպա, միաժամանակ վախճենում է կորցնել իր ինքնիշխանությունը և տարրալուծվել դաշնային Եվրոպայի մեջ, որը կինհ ոչ ֆրանսիական: Ինչպես նշում են հեղինակները, Եվրոպայի նկատմամբ Ֆրանսիայի տեսլականը հիմնվում է երկու հակադիր դրույթների վրա՝ Ժան Մոնեի պաշտպանած դաշնային Եվրոպա և դր Գոլի ինքնիշխան պետությունների Եվրոպա⁷: Այս առումով կարելի է նկատել, որ Ֆրանսիայի Եվրոպական քաղաքականության շրջանակներում փորձ է արվում հավասարակշռություն պահպանել միջկառավարական և վերպետական սկզբունքների միջև: Ըստ որոշ տեսաբանների, միջկառավարական մոտեցումը լավագույն միջոցն է՝

¹ Stéphane Schwart R., *La France et l'intégration européenne: une évolution du paradigme identitaire*, French Politics & Society, Vol. 17, N1, (Winter 1999).

http://www.academia.edu/1087605/La_France_et_l'integration_europeenne._Une_evaluation_du_paradigme_identitaire (27.12.2013):

² Stéphane Orléans, Brand Crémieux, Marie-Noëlle, *Une grande Allemagne au cœur de l'Europe: représentations françaises de l'Allemagne unifiée & objectifs de la politique européenne*, Relations internationales. N 126 (2006), t2 15-30, http://www.cairn.info/resume.php?ID_ARTICLE=RI_126_0015, (27.02.2014):

³ Stéphane Orléans, t2 22:

⁴ Stéphane Szeptycki A., նշանակած աշխատություն, t2 23:

⁵ Stéphane Allocution de M. Nicolas Sarkozy à l'occasion de l'ouverture de la XV ème Conférence des Ambassadeurs (Palais de l'Elysée, 27 août 2007), <http://www.diplomatie.gouv.fr/fr/le-ministere-et-son-reseau/evenements-et-actualites-du/conference-des-ambassadeurs/precedentes-conferences/xveme-conference-des-ambassadeurs/article/allocution-de-m-nicolas-sarkozy-a> (28.02.2014):

⁶ Stéphane Achard A., Европейская политика Саркози: анализ действий Франции в период председательства в Евросоюзе. <http://www.dermfa.ir/pdf/Amudarya-pecha2009/1.pdf>, t2 252:

⁷ Stéphane Steven Ph. Kramer, David Rochefort, *La fin de l'Europe française? Politique étrangère 3/2006, t2 649-661.* <http://www.cairn.info/article.php?REVUE=politique-etrangere&ANNEE=2006&NUMERO=3&PP=649>:

հաշտեցնելու նվրոպական միասնականացումը և ազգային ինքնիշխանության պահպանումը: Ֆրանսիական դեկապարության համար միջազնութական մոտեցումը հանդիսանում է «նվրոպական ձևով գործելու» լավագույն լուծում՝ ապահովելով, որ երկրի կառավարությունը մնա իրավիճակի տնօք: Այսինքն, շնորհիվ դրա, նվրոպական միասնականացումը մնում է իր ձեռքին¹:

Պատմականորեն, փաստորեն, ֆրանսիան իր նվրոպական քաղաքականությամբ փորձել է, մի կողմից, կառուցել հզոր Եվրոպա, մյուս կողմից, դժգոհ է եղել վերազգային ինստիտուտներին լրացուցիչ իրավասություններ տալուց: Ինչպես նշում են հեղինակները, Եվրոպայի նկատմամբ ֆրանսիայի տեսլականը հիմնվում է երեք սկզբունքի վրա.

1. Միջկառավարականություն, որը կապաշտապանի և կնրաշխավորի ֆրանսիայի ինքնիշխանությունը (և, մասնավորապես, երկրի նախագահի իրավասությունները),

2. ԵՄ-ում ֆրանսիայի լիդերությունը (կամ ֆրանս-գերմանական լիդերություն՝ ֆրանսիական պայմաններով),

3. Եվրոպական Եվրոպայի տեսլական՝ առանց ԱԱՄ-ի գերիշխանության²:

Այսօր ֆրանսիական գիտական և քաղաքական շրջանակներում նվրոպական ինտեգրման գործընթացի և դրա արդյունքում ինքնիշխան որոշ իրավասությունների փոխանցումը միանշանակ չի քննարկվում: Տեսական հարթությունում այս առումով «քայլումները» շատ են: Հեղինակների մի մասն անհրաժեշտ է համարում վերանայել ինքնիշխանության առանցքային դրույթները, իսկ մյուս մասն էլ պաշտպանում է ինքնիշխանության մասին ավանդական հայացքների և զաղափարների անձննամենակությունը: Մասնավորապես, առաջինները նշում են, որ ԵՄ-ին տրվել են այնպիսի իրավասություններ, որոնք միջազգային կազմակերպությունների պրակտիկայում աննախադեպ են, ԵՄ-ն ստացել է իրավասություններ արժութային, ուսիկանական, պաշտպանական քաղաքականության հարցերում, և դրանք դադարում են լինել պետությունների մենաշնորհը³: Այս շատ այլ հիմքերով նրանք նպատակահարմար են համարում առաջ քաշել նոր հասկացություններ՝ բնութագրելու ինտեգրման գործընթացում ինքնիշխանության վիճակը: Օրինակ, կարենի է վկայակոչել այնպիսի նոր հասկացություններ, ինչպիսիք են՝ համատեղ ինքնիշխանությունը (co-souverainete)⁴, կոռպերատիվ ինքնիշխանություն (souverainete cooperative)⁵ և այլն: Իսկ հեղինակների երկրորդ խումբը էլ նշում է, որ կարիք չկա «հորինել» իրավական կամ քաղաքական նոր կատեգորիաներ՝ ինտեգրման մեջ ինքնիշխանության բնույթը հասկանալու համար⁶, կամ նշում է, որ վերազգային մարմիններին իրավասությունիրավասություններ տալը չի նշանակում, որ անդամներն այլևս ինքնիշխան չեն⁷: Այս առումով հատկանշական է նշանակոր մտածող Մ. Շյուվերժենի բնորոշումը: Նա, դիտարկելով ԵՄ-ում ինքնիշխանության խնդիրը, նշում է, որ իրավասությունների բաժանումն անհարկի կնրանք անվանվել է ինքնիշխանության բաժանում, իսկ ինքնիշխանությունն անբաժանելի սկզբունք է: Արտաքին կամ ներքին գործերում իրավասությունների բաժանումը չի նշանակում ինքնիշխանության բաժանում, քանի որ զոյլություն ունի ինքնիշխանության միակ հայեցակարգ, որը ճանաչված է միջազգային իրավունքով⁸: Մասատրիխսի պայմանագրի բնարկումների ժամանակ երկրի քաղաքական շրջանակներում պաշտպանվեց այսպես կոչված «արդյունավետ» ինքնիշխանության գաղափարը: Այս հիմքով պետական իրավասությունների համատեղ իրականացումը դիտվել է անհրաժեշտ պայման, որպեսզի առկա հանգամանքներում ինքնիշխանության գաղափարը լինի իրականություն

¹ Stéphane Moreau Ph., *La France et l'Europe: l'inévitable débat, Politique étrangère*, N4 (2002), էջ 951-966, http://www.persee.fr/web/revues/home/prescript/article/polit_0032-342x_2002_num_67_4_5240, (25.02.2014):

² Stéphane Steven Ph. Kramer, David Rochefort, նշված աշխատություն, էջ 659:

³ Stéphane Ferry J.-M., *Face à la question européenne, le problème d'une intégration postnationale, Critique internationale*, n-23, avril 2004, էջ 16-17:

⁴ Stéphane Besson S., նշում տեղում, էջ 13:

⁵ Stéphane Besson S., *La souveraineté coopérative en Europe, ou comment la Suisse pourrait être à la fois européenne et souveraine / Samantha Besson, La Suisse saisie par l'Union européenne*, 2003:

⁶ Stéphane Saurugger S., *Theoriser l'Etat dans l'Union européenne ou la souveraineté au concret*, էջ 2, *Jus Politicum*, 8, 2012:

⁷ Stéphane Cohen J.-L., Cohen J.-L., *Les transformations contemporaines de la souveraineté, in Savidan P., Les métamorphoses de la souveraineté, Presses Paris Sorbonne*, 2006, էջ 53-54:

⁸ Stéphane Anne Legaré, *La souveraineté est-elle dépassée? Entretiens avec des parlementaires et intellectuels français autour de l'Europe actuelle*. Montréal, 1992, էջ 24-25:

(այն հիմքով, որ ըստ պաշտպանած տեսակետի, Միությունը նվրոպական ազգերի համար հղորության ավելացման գործոն է): Քննարկումների ժամանակ ֆրանսիական պետական գործիչներից մեկը նշել է, որ պետությունը իրաժարվում է իր ինքնիշխանության մի մասից, որպեսզի նվրոպական մակարդակում հասնի ավելի քիչ տեսական և ավելի շատ արդյունավետ ինքնիշխանության, որը կիրականացվի ընդհանուր կերպով և հնարավոր կլինի դիմակայել արտաքին մարտահրավերներին¹:

Ամփոփելով նշենք, որ ներկայում Ֆրանսիան նվրոպական ինտեգրումը կարևորում է որպես պետության առջև դրված տարրեր նպատակների իրականացման միջոց: Միաժամանակ, Ֆրանսիան իր որոշ իրավասություններ փոխանցնել է ԵՄ-ի վերազգային ինստիտուտներին: Օրինակ, այսօր տարբեր ոլորտներ և հատկապես տնտեսության շատ տարրեր բավականին նվրոպականացված են: Ճիշտ է, որոշ հեղինակներ հատկապես կարևոր տեղ տալիս են միջկառավարական մոտեցմանը, սակայն, ի տարբերություն, օրինակ, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի նվրոպական քաղաքականության մեջ վերազգային մոտեցումը ևս բավականին իշխել է: Սակայն, մյուս պետությունների նման, Ֆրանսիան ևս իր համար շատ կարևոր հարցերում (օրինակ, Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքանություն) չի պատրաստվում իր իրավասությունները կիսել ԵՄ-ի ինստիտուտների հետ:

Ի հարկեն, պետք է փաստել, որ ներկա պայմաններում, կապված գլոբալացման և ինտեգրման գործընթացմերի, միջազգային իրավունքի համակարգի զարգացման հետ, ինքնիշխանություն նորը, որպես միջազգային իրավունքի առանցքային հայեցակարգ, գտնվում է վերահմաստավորման շրջանում, սակայն միևնույն ժամանակ, առկա գործընթացների առանցքում գտնվում են ինքնիշխան պետությունները: ԵՄ-ն ունի պետական շափում, այսինքն՝ իրավասությունների փոխանցման լոնդիրը լուծվում է ազգային մակարդակում: Բացի այդ, ինքնիշխանություն նորն արդի պայմաններում շարունակում է բնութագրել միայն պետություններին, իսկ վերջիններիս կողմից ԵՄ-ին փոխանցված իրավասությունները չեն կարող դիտվել որպես ԵՄ-ի ինքնիշխան իրավասություններ, քանի որ վերջինս չունի ինքնիշխանություն:

Գրականություն

1. Борко Ю., Буторина О., История развития Европейского Союза, // Европейская интеграция: учебник, М., 2011,
2. Ахани А., Европейская политика Саркози: анализ действий Франции в период председательства в Евросоюзе. <http://www.dermfa.ir/pdf/Amudarya-pecha2009/1.pdf>,
3. Anne Legaré, La souverainete est-elle depassee? Entretiens avec des parlementaires et intellectuels français autour de l'Europe actuelle. Montréal, 1992,
4. Besson S., La souverainete cooperative en Europe, ou comment la Suisse pourrait être à la fois européenne et souveraine / Samantha Besson, La Suisse saisie par l'Union européenne. 2003,
5. Cohen J.-L., Les transformations contemporaines de la souverainete, in Savidan P., Les metamorphoses de la souverainete, Presses Paris Sorbonne, 2006,
- 6.Crivat L., Mythes et realites de l'integration differenciee dans l'Union europeenne, Institut European, Universite de Geneve, EUROPA etudes 6-1997,
- 7.Ferry J.-M., Face a la question europeenne, le probleme d'une integration postnationale, Critique internationale, n-23, avril 2004,
- 8.Moravcsik, A., Le grain et la grandeur: les origines économiques de la politique européenne du général de Gaulle. Revue française de science politique. N 4-5 (1999), էջ 507-544,
- 9.Rene Schwok, Theories de l'integration europeenne, approches, concepts et debats, Edition Montchrestien, 2005, Paris,
10. Saurugger S., Theoriser l'Etat dans l'Union europeenne ou la souverainete au concret, Jus Politicum, 8, 2012,

¹ Stéphane Haquet A., La (re)definition du principe de souverainete, 141-153, Pouvoirs N-94, 07-09, 2000, http://www.revue-pouvoirs.fr/IMG/pdf/94Pouvoirs_p141-153_chroniques_souverainete.pdf , (28.02.2014):

- 11.Defarges Moreau Ph., La France et l'Europe: l'inévitable débat, Politique étrangère, N4 (2002), № 951-966, http://www.persee.fr/web/revues/home/prescript/article/polit_0032-342x_2002_num_67_4_5240,
- 12.Haquet A., La (re)definition du principe de souverainete, 141-153, Pouvoirs N-94,07-09 2000, http://www.revuepouvoirs.fr/IMG/pdf/94Pouvoirs_p141153_chroniques_souverainete.pdf,
- 13.La politique europeenne du general de Gaulle, http://www.gaullisme.fr/politique_europ_cdg.htm,
- 14.Schwok R., La France et l'integration europeenne: une evolution du paradigme identitariste, French Politics & Society, Vol. 17, N1, (Winter 1999),
http://www.academia.edu/1087605/La_France_et_lintegration_europeenne._Une_evaluation_du_paradigme_identitariste,
- 15.Steven Ph. Kramer, David Rochefort, La fin de l'Europe française? Politique étrangère 3/2006, № 649-661.
<http://www.cairn.info/article.php?REVUE=politique-etrangere&ANNEE=2006&NUMERO=3&PP=649>,
- 16.Allocution de M. Nicolas Sarkozy à l'occasion de l'ouverture de la XV ème Conférence des Ambassadeurs (Palais de l'Elysée, 27 août 2007), <http://www.diplomatie.gouv.fr/fr/le-ministere-et-son-reseau/evenements-et-actualites-du/conference-desambassadeurs/precedentes-conferences/xveme-conference-des-ambassadeurs/article/allocution-de-m-nicolas-sarkozy-a>:

Տնտեսություններ հնդինակի մասին

Լուսինե Խոջայան – ԵՊՀ Քաղաքական զիտության պատմության և տնտեսության ամբիոնի 1-ին կուրսի հնդակա ուսուցման ասալիքանու

E-mail: lusinekhojayan@yahoo.fr

Հոդվածը տպագրության է նրաշխավորել խմբագրական կունգիայի անդամ, ք.գ.դ. Ա.Ենգոյանը: